

## ՔՆՆԵՐԸՑՈՒԹԻՒՆ ԵԽ ՄԱՏԵՆԱԽՍՈՍՈՒԹԻՒՆ



Մամուկ Արեդան՝ Աօփարհաբարարի Թմրականութիւնը, դասագիրք ստորին դաստիանների համար. Վաղարշապատ, 1906, գ. 60 կ.

Եջմիածնի ճեմարանի ուսուցիչ և իր գրական-պատմական աշխատութիւններով ծանօթ հեղինակի յօրինած այս դասագիրքը արժանի է առանձին ուշադրութեան հայոց լեզուի ուսուցիչների կողմից: Մեզանում, հայերիս մէջ, ամեն ինչ խառն ու խուն է և անկերպարան. կարելի է ասած մենք ի բնէ անարխիստներ ենք, իւրաքանչիւրը իր անհատական քմահաճոյքը, կարծիքը սիրում է օրէնք յայտարարել: Այդ հայկական բնաւորութեան արտայայտութիւններից մէկն էլ «հայոց քերականութիւնն» է. մվ ասես այդ ասպարիզում իրան վերանորոգիչ չէ համարում: Մ. Արեղեանի «քերականութիւնը» կարող է համարուել ազատ թեթևամիտ նորաձեռութիւնների յաւակնութիւններից և իր լուրջ սիստեմով անշուշտ քիչ չի օգնելու մեր մէջ վերջ դնելու քերականական բաշիրուզուկութիւններին:

Մի փոքրիկ, ոչ էական նկատողութիւն. ինչնու հեղինակը հայոց լեզուի բարբառները բաժանում է Արարատեանի և Կոստանդրապոլիսի: Եթէ արևելեան և արևմտեանից բացի ցանկանանք աշխարհագրական տրոհում առաջարկել՝ մեզ թւում է աւելի ճիշտ այդ դէպքում Արարատեանի հանդէպ դնել Տարօնեան, ուր ծնունդ է առել մեր հին գրական լեզոն: Այն բարբառները, որոնցից ծագել է գրաբարը այժմ էլ պահպանել են իրանց բնորոշ առանձնայատկութիւնները Տարօնի գաւառներում (Մուշ):

Վերջացնելով մեր նկատողութիւնները, յանձնարարում ենք մեր բոլոր դպրոցներում մտցնել այս դասագիրքը, որ աւելի համապատասխանում է ժամանակակից գիտական պահանջներին:

Na